

Փառանձեմ Գ. Մեյթիխանյան
բանաս. գիտ. թեկնածու

ԵՂԵՌՆ ԲԱՌԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ*

Յուրաքանչյուր գիտակից հայի բառապաշարում առանձնահատուկ կարևորություն ու կշիռ ունեն **եղեռն** և **ցեղասպանություն** բառերը: Դրանք իրենց մեջ խտացնում են 20-րդ դարասկզբի ամենամեծ ողբերգությունը՝ օսմանյան Թուրքիայի կողմից մի ամբողջ ժողովրդի ոչնչացման հրեշավոր ծրագիրը, որին համարժեք է հրեական **հա-շոան հոլոքոստը**:

Եղեռն բառի առաջին գործածությունը գտնում ենք **Աստվածաշնչում** և ոչ մեկ անգամ: *Բ Մակարայեցիների* գրքում գործածված ենք տեսնում **եղեռն** բառը. «Մեծ եղեռն վնասու քաղաքացուցն իւրոց կացուցանէր»/Գ 5/: **Ամովսի մարգարեության** մեջ կարդում ենք. «Հավաքվեցե՛ք Սամարիայի լեռան վրայ եւ տեսե՛ք քաղում զարմանալի գործերն ու բռնությունը, որ կատարվում են այնտեղ: Նրանք չինացան իրենց պատահելիք **եղեռնը**, - ասում է Տէրը»/Գ 9-10/: Ընթերցողին այս խոսքերը առավել հասկանալի լինելու համար ասենք, որ Ամովսի մարգարեության խորհուրդը ընդհանրապես այն է, որ յուրաքանչյուր մարդ, ինչպես և ժողովուրդ, պիտի կարողանա ապրել այլ մարդկանց կամ ժողովուրդների մեջ: Դրա համար Աստված հաստատել է իրավունք: Ահա, եթե այդ իրավունքը ոտնահարվում է ուժեղների կողմից, ապա Աստված հանդես է գալիս որպես թույլերի իրավունքի խստապահանջ պաշտպան: Հունարեն **Յոթանասնից** բնագիրը այս տեքստում եղեռն բառի դիմաց համապատասխան տեղում դնում է εναντιον հա - մարժեքը: **ԻՋԵ-Գ**¹ նույն կոնտեքստում այս նույն նախադասությունը տալիս է քիչ այլ կերպ՝ «Они не умеют поступать справедливо, говорит Господь: насилем и грабежом собирают сокровища в чертоги свои», որտեղ առկա **насилие** բառը հայե-

* Այն բանից հետո, երբ 2009թ. ապրիլի 24-ի իր ուղերձում ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման օգտագործեց «Մեծ եղեռն» հասկացությունը, աշխարհի տարբեր երկրների զանգվածային լրատվամիջոցներում լայն տարածում գտան այդ բառակապակցության տարիմատ մեկնաբանությունները, իսկ թուրքական կողմը անմիջապես գործարկեց նենգափոխումների իր մեթոդները: Լեզվաբան Փ. Մեյթիխանյանի սույն հրապարակումն իբրև «ԵՂԵՌՆ» բառի ստուգաբանություն, փակում է նման թյուրիմացությունների ու կեղծարարությունների ճանապարհը: *Խմբ.*

¹ Stn Новая Женеветская учебная Библия, Синодальный перевод, 1998 г.

րենի **բռնություն** բառի համարժեքն է: Ի դեպ, ասենք, որ Աստվածաշնչի արևմտահայերեն տարբերակում ևս բառը թարգմանված է հենց այդպես: Բայց թե՛ արևմտահայերեն և թե՛ ռուսերեն *Աստվածաշունչ* գրքերում բացակայում է:

«Նրանք չիմացան իրենց պատահելիք **եղեռնը**» նախադասությունը, այն բացակայում է նաև երբայերեն տեքստում: Բայց դա այլ քննարկման նյութ է:

Աստվածաշունչ գործածված ենք գտնում նաև **եղեռնագործ, եղեռնագործություն** բառերը: Հորի գրքում/ԼԳ- 18/ կարդում ենք. «Ան, որ բազաուրին կըսէ՝ Եղեռնագործ ես...»²: Երբայերեն տեքստում դարձյալ բացակայում է **եղեռնագործ** բառը՝ փոխարենը դնելով **անօրենը**:

Հին Կրակարանում առկա **եղեռն, եղեռնագործ, եղեռնագործություն** բառերում որոշակիորեն ընդգծվում է **եղեռն** արմատը, իսկ քանի որ բառն այդ ձևով չկա երբայերեն *Աստվածաշունչ* բնագրում, իսկ հունարենում տրվում է enantion տարբերակը, ապա դա հիմք է տալիս կարծելու, որ **եղեռն**-ը կարող է բնիկ հայկական արմատ լինել:

Սակայն զարմանալիորեն ստեղծված է հակասություն **եղեռն** բառի ըստ գործածությունների նշանակության, իմաստի և այդ բառի կամ արմատի՝ մեր հին բառարաններում տրվող մեկնաբանության միջև: Փորձենք տարբերակել հնարավոր արմատներն ու դրանց իմաստները:

Մինչև Մ.Սեբաստացու բառարանի հանդես գալը «*Բառգիրք հայոցը*» համարվել է բառերի ներկայացման ու բացատրման ամենագործածական բառարանը, և այստեղ էլ տրվում են մեզ հետաքրքրող երկու արմատներն էլ՝ **եղեռն-չար** կամ **դառն** և **եղար-գուգակի՞ց**, բայց **եղերական-լալական, եղերերգու-լալական երգ**:

Հայերենում առկա **եղար** արմատը ըստ Մխիթար Սեբաստացու ՀՀԿ-ի³, նշանակում է **ողբ, կոծ**: Հետագայում եղար-ը դառնում է **եղեր**, և **եղեր** արմատով էլ մեր լեզվում բաղադրվում են բազմաթիվ բառեր՝ **եղերամայր, եղերական/ողբալի՛, եղերերգ, եղերերգակ, եղերերգու, եղերերգություն/ողբական երգ**⁴: Սակայն նույն **եղեր** գլխաբառի տակ տրվում է նաև **եղեռնագործ** բառը, ինչը ոչ մի ձևով չի հիմնավորվում: Եթե ընդունենք եղերի ողբ, լաց և կոծ իմաստները իբրև միակ ու վերջնական, ապա ինչ-որ տեղ հակասություն է առաջանում նույն արմատով բաղադրված **եղեռնագործ** բառում այդ նույն արմատի արտահայտած իմաստի միջև, քանի որ վերջինս նշանակում է **չարագործ, ոճրագործ**, և մեր հներն էլ այդ բառի նշանակության մասին գրել են՝ «որ լալոյ արժանի գործ գործե՛»/ԼԾ,նար, Հր.Աճ./:

ՆՀԿ-ն⁴ տալիս է **եղեռն** գլխաբառը՝ հոգնակի **եղերք**, եղերունք դրսևորումներով, որը բառացի նշանակում է **չարիք, ոճիր, վրանգ, աղեպ**/էջ 654/:

Նոր հայկազյան բառարանը տալիս է եղեռն ձևը նաև եղերական գլխաբառի տակ՝ նշելով հոգնակին՝ եղերք, բերում է եղերերգություն բառի հունարենը՝ **Ελεγεια**, լատիներենը՝ **Ululatus**: Հունարենը տալիս է նաև **Εγχοσ** ձևը, որ նշանա-

² Այս բնագրում առկա **եղեռնագործ** բառը գրաբար և աշխարհաբար տեքստերում տրված է **ամբարիշտ** տարբերակով:

³ Տե՛ս Հին Հայկագետն բառարան, 1749թ:

⁴ Տե՛ս Նոր բառգիրք հայկագետն լեզուի, հ. Ա-Կ, եր., 1979թ:

կում է **կարեկցություն**: Հիշատակել կարելի է նաև վրացական դրիալի արմատը, որ ստուգաբանվում է իբրև **լաց**:

Ինչպես տեսնում ենք, ունենալով տարբեր իմաստներ, այս արմատները հաճախ շփոթվում են միմյանց հետ և մեկով կազմված բառը տրվում է մյուս արմատով բաղադրված բառերի շարքում:

Ո՞ր ձևն է ավելի հին՝ **եղե՞ռն**, թե՞ **եղեք**, և մյուս կողմից՝ **եղա՞ր**, թե՞ **եղեր**: Այն, որ հայերենի համար օրինաչափություն է **ռ-ր** հնչյունափոխությունը, վերստին հաստատման կարիք չունի. **եղեռն**-ը պետք է դառնար **եղար** կամ **եղեր**, և ոչ թե հակառակը/համեմատի՞ր **դառնալ-դարչել**, **չեռ-չերբ-չերբազապվել**, **ընթեռնուլ-ընթեռնելի-ընթերցել**: Հր.Աճառյանը բերում է երկու արմատներն էլ՝ **եղար** և **եղեր**, նաև **եղեռն**, բայց չի նշում, թե դրանցից որն է առավել սկզբնական ձևը:

Ժամանակակից հայերենում գերիշխողը դառնում է եղեռն բառի չարիք, ոճիր իմաստները և Ա.Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանում» տրվում է **եղեր-ը սուգ, լաց** հոմանիշներով, իսկ եղեռն-ը՝ «**1.Ոճիր, ոճրագործություն, եղեռնագործություն, չարագործություն /մարդասպանություն, ծանր հանցագործություն/: 2.Սպանություն, կոտորած, ջարդ, նախճիր, սպանդ, արյուն/ա/հեղություն, սրածություն, յաթաղան, խողխողում, եղեռնություն/հնգ./, ցեղասպանություն /զանգվածային կոտորած՝ սպանություն»**»⁵ ՀՀԲԲ, էջ 264/:

Փաստորեն ժամանակակից հայերենում ոչ միայն տարբեր բառեր են և տարբեր նշանակություններ ունեն **եղեռն**-ը և **եղեր**-ը, այլև դրանցով բաղադրված բառերը: Այսպես՝ **եղեռն- եղեռնաբար, եղեռնաբույր, եղեռնագործ, եղեռնագործություն, եղեռնադար, եղեռնալուր, եղեռնական, եղեռնապաշար, եղեռնապատում, եղեռնապատում, եղեռնափորչ** և այլն, իսկ **եղեր- եղերամայր/** պատմաբառ է և նշանակում է **ողբամայր, սգամայր, ողբասաց, լալկան, կոծաղիք, չայնարկու/մեռյալների վրա ողբացող՝ սգացող կին/**, **եղերաբախար, եղերազավեշար, եղերախառ, եղերակարակերգություն, եղերաշուք, եղերելի, եղերերգ, եղերերգակ, եղերերգել, եղերերգություն**⁵:

Կարևորենք և առանձնացնենք ցեղասպանություն բառը, որը բառարաններում տրվում է «**Ծայրահեղ վայրենի՝ բարբարոսական գործողությունների ամբողջությունը, որ կատարվում է բնակչության մի որևէ ազգային կամ կրոնական խումբը լրիվ կամ մասնակիորեն ոչնչացնելու նպատակով**» բացատրությամբ/ԺՀԲԲ/, և նույնանիշներ են բերվում **ժողովրդասպանություն** և **զենոցիդ** բառերը:

Ցեղասպանություն բառը մենք փոխառել ենք հունարենից և, ինչպես տեսնում ենք, ընդամենը վերջին հարյուրամյակում, իսկ դա միանգամայն ընկալելի ու բացատրելի է. եղեռն բառը ամբողջովին իր մեջ ներառել ու կրել է այդ նույն իմաստը: Արդի հայերենի բառապաշարում ցեղասպանություն և եղեռն բառերը դարձել են հոմանիշներ և ցանկացած կոնտեքստում թերևս կարող են փոխարինել մեկը մյուսին: Մենք կարծում ենք, որ լեզվի պատմական զարգացումը միանգամայն օրինաչափորեն ստեղծել է նախ **եղեռն**, ապա **ցեղասպանություն** բառերը՝ դարձ -

⁵ Տե՛ս Ա.Սուքիասյան, ԳԳԲ, էջ 264-265:

նելով դրանք մեկ օրգանական միասնություն, որոնցից յուրաքանչյուրը կարող է փոխարինել մյուսին, գործածվել նրա փոխարեն:

Մեր գիտակցության մեջ ընդհանրապես ամրագրված է այդպես, իսկ մասնավորապես Հայկական սովետական հանրագիտարանը փաստում է.«Մեծ եղեռն, Մեծ ոճիր, հայերի գեոցիդ/ցեղասպանություն/»:

Առաջադեմ մարդկությունը դասադարձել և շարունակում է դասադարձել մարդկության դեմ ուղղված բոլոր ոճրագործությունները՝ դրանք որակելով կամ որդես Ցեղասպանություն, կամ որդես Մեծ եղեռն:

Ամփոփենք. արդի հայերենում **եղեռն** և **եղեր** արմատները տարբեր նշանակություններ ունեն և շփոթելի չեն: Չուզահեռաբար գործածվում են **եղեռն** և **ցեղասպանություն** բառերը, որոնք, ունենալով մի քանի հոմանիշային իմաստներ, ընդհանրանում են **սպանություն, կոպորած, ջարդ, նախճիր, սպանդ, արյուն/ա/հեղություն, սրածություն, խողխողում, զանգվածային կոպորած** իմաստներով:

THE LINGUISTIC ANALYSIS OF THE WORD EGHERN (ԵՂԵՌՆ)

Parandzem G. Meytikhanyan